

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԱՐՏԱՇԵՍ ԱՐՏԱԿԱԶԴԻ ԽԱՆԱԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐՐՈՐԴ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ՁԵՎԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

ԺԲ.00.02 – «Հանրային իրավունք – սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2018

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

ХАЛАТЯН АРТАШЕС АРТАВАЗДОВИЧ

**ПРОБЛЕМЫ РАЗВИТИЯ ФОРМЫ
ГОСУДАРСТВЕННОГО ПРАВЛЕНИЯ
В ТРЕТЬЕЙ АРМЯНСКОЙ РЕСПУБЛИКЕ**

АВТОРЕФЕРАТ

**диссертации на соискание ученой степени кандидата юридических наук по
специальности 12.00.02 – “Публичное право – конституционное,
административное, финансовое, муниципальное, экологическое, европейское
право, государственное управление”**

ЕРЕВАН 2018

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝

իրավաբանական գիտությունների
թեկնածու, դոցենտ **Վ.Ն. Ավագյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

իրավաբանական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր **Ա.Գ. Վաղարշյան**

իրավաբանական գիտությունների
թեկնածու, դոցենտ **Է.Է. Շաթիրյան**

Առաջատար կազմակերպություն՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիա

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2018թ. հունիսի 26-ին, ժամը 11⁰⁰-ին ՀՀ ԲՈՀ-ի՝ Երևանի պետական համալսարանում գործող իրավագիտության 001 մասնագիտական խորհրդի նիստում (Երևան-0025, Ալեք Մանուկյան 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանի գիտաշխատողների ընթերցասրահում:

Սեղմագիրն առաքվել է 2018թ. մայիսի 25-ին:

Մասնագիտական խորհրդի գիտ.

քարտուղար, իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ

Ա. Ա. Մանասյան

**Тема диссертации утверждена в
Ереванском государственном университете**

Научный руководитель:

кандидат юрид. наук,
доцент **В.Н. Айвазян**

Официальные оппоненты:

доктор юрид. наук,
профессор **А.Г. Вагаршян**

кандидат юрид. наук,
доцент **Э.Э. Шатирян**

Ведущая организация: Академия государственного управления РА

Защита диссертации состоится 26-ого июня 2018 г. в 11⁰⁰ ч. на заседании Специализированного совета ВАК РА 001 по юриспруденции при Ереванском государственном университете (Ереван-0025, ул. Алека Манукяна 1).

С диссертацией можно ознакомиться в читальном зале научных работников Ереванского государственного университета.

Автореферат разослан 25-ого мая 2018 г.

**Ученый секретарь специализированного совета,
кандидат юридических наук, доцент**

А.А.Манасян

ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹՅՈՒՆ

Թեմայի հետազոտման արդիականությունը: Սույն ատենախոսական աշխատանքի գիտական հետազոտության արդիականությունը պայմանավորված է Հայաստանի Երրորդ Հանրապետության պատմության ավելի քան 25-ամյա շրջափուլում պետական կառավարման, պետաիշխանական բարձրագույն մարմինների կազմավորման, գործունեության, փոխհարաբերության, քաղաքական համակարգի հետ դրանց փոխառնչակցության՝ սահմանադրական ամրագրում ստացած կառուցակարգերի գիտական ուսումնասիրության և վերլուծության անհրաժեշտությամբ, ինչպես նաև նշյալ սահմանադրավական հարցադրումների վերաբերյալ հայրենական իրավական մշակույթում ձևավորված դեռևս ոչ միասնական պատկերացումների և քաղաքական դիրքորոշումների ուսումնասիրման անհրաժեշտությամբ:

Մասնավորապես, գտնում ենք, որ հայ իրավական և քաղաքական միտքը դեռևս միարժեքորեն չի ընդունում պետական կառավարման համակարգի՝ որպես պետության ձևի առանցքային բաղադրատարրերից մեկի ելակետային նշանակությունը Հայաստանի Երրորդ Հանրապետության պատմական և քաղաքական շարժընթացի մասնագիտական մեկնաբանման և վերլուծության համար: Պետաիրավական ինստիտուտների տեսական վերլուծության ժամանակ հաճախ նկատվում է յուրաքանչյուր խնդրի կամ ինստիտուտի մեկուսի դիտարկման միտում՝ առանց դրա համակարգային հատկանիշների բավարար վերհանման և կարևորման: Մինչդեռ, կարծում ենք՝ պետաիրավական ցանկացած ինստիտուտի ուսումնասիրման, դրա առավելություններն ու թերությունները ճշգրտորեն տարբերակելու և համապատասխան լուծումներ և հայեկացակարգեր առաջարկելու համար խիստ կարևոր է դրանց դիտարկումը որպես ամբողջի մաս, այն է՝ պետաիշխանական համակարգի բաղկացուցիչ տարր: Այդպիսով առավել պարզ կդառնան ցանկացած պետաիշխանական ինստիտուտի ծագումնաբանության և զարգացման հետազոտը, ծառացած խնդրականներն ու մարտահրավերները: Նման վերլուծությունը մեթոդաբանորեն ճիշտ և արդյունավետ իրականացնելու համար կարևոր է նաև, ընդհանրապես, Հայաստանի պետաիշխանական համակարգի մոդելավորման ուսումնասիրությունը՝ շեշտը դնելով դրա էվոլյուցիայի և զարգացման միտումների իրավահամեմատական և պատմաիրավական ուսումնասիրության վրա: Նման ուսումնասիրության փորձ է հանդիսանում նաև սույն ատենախոսությունը:

Բացի այդ, հատկապես քաղաքական պրակտիկայում և հանրային բանավեճում ընդունված է պետական ինստիտուտների գործառնման հարցը քննարկել գերազանցապես ընթացիկ քաղաքական իրողությունների պրիզմայի ներքո՝ պետականության կառուցակարգային զարգացման գործընթացը կապելով անձնական-սուբյեկտիվ գործոնների հետ: Այդպիսի իրողության պատճաններից մեկը նաև այն է, որ ակադեմիական հարթակում պետական կառավարման ձևի, դրա տեսակների, դրանց կազմակերպման և գործունեության հիմքերի, Հայաստանի իրողությունների հաշվառմամբ՝ դրանց կիրառման առանձնահատկությունների, առավելությունների, թերությունների և բացթողումների վերաբերյալ կատարված ուսումնասիրությունները մեծ թիվ չեն կազմում և չունեն ռազմավարական բավարար ազդեցություն քաղաքական պրակտիկայի և բանավեճի բովանդակության վրա: Սույն հանգամանքով պայմանավորված՝ ատենախոսության մեջ փորձ է արվել նաև գործնական քաղաքական խնդիրներն ուսումնասիրել գիտական-ա-

կադեմիական տեսանկյունից՝ էմպիրիկ առումով անհրաժեշտ կապ ստեղծելով ատենախոսության տեսական նյութի և գործնական քաղաքական իրողությունների միջև:

Թեմային լրացուցիչ կարևորություն է հաղորդում 2015 թվականի դեկտեմբերի 6-ին հանրաքվեի միջոցով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների նախագծի ընդունումը, որի արդյունքում գործող կիսանախագահական կառավարման համակարգը (ձևը) փոխարինվում է խորհրդարանական կառավարման ձևով: Մեզանում խորհրդարանական կառավարման ձևի անցման գործընթացը կավարտվի 2018 թվականին, երբ խորհրդարանական համակարգի նորմատիվ չափանիշներին համապատասխան՝ լիովին կվերափոխվեն ոչ միայն իշխանության երեք թևերը, այլև Նախագահի ինստիտուտը և երկրի ողջ քաղաքական և իրավական համակարգը: Սա խիստ կարևոր է դարձնում հատկապես խորհրդարանական կառավարման ձևի ավելի խորը և համակողմանի ուսումնասիրությունը՝ ելնելով նաև այն հանգամանքից, որ մեզանում հետագա գիտական ուսումնասիրության և վերլուծության կարիք ունի նաև խորհրդարանական կառավարման ձևին անցնելու անհրաժեշտության հարցը:

Սույն ատենախոսության արդիականության վրա որոշակի ազդեցություն ունի նաև այն մտտեցման առաջադրումը, որ ցանկացած պետության համար կառավարման ձևն ունի ելակետային նշանակություն՝ պետական կառուցակարգի կազմակերպման և արդյունավետ գործունեության տեսանկյունից: Պետության կառավարման համակարգի կառուցակարգերից և նորմատիվ- քաղաքական բովանդակությունից կարելի է պատկերացում կազմել, ընդհանրապես, նրա էության և սոցիալական նշանակության մասին: Բացի դրանից, պետության կառավարման համակարգի ճիշտ ընտրությամբ է պայմանավորված անձի իրավունքների և ազատությունների երաշխավորված պաշտպանության կառուցակարգը, ժողովրդավարական արժեքների պահպանումը, միջազգային պարտավորությունների պատշաճ կատարումը և այլն: Այս ամենը ենթադրում է նաև որոշակի տեսական և գործնական բնույթի աշխատանքների, այդ թվում նաև գիտական հետազոտությունների իրականացում:

Միևնույն ժամանակ պետական կառավարման համակարգի ճիշտ ընտրության համար կարևոր է հաշվի առնել ընթացիկ և փաստացի քաղաքական իրողությունները, հասարակության սոցիալական կառուցվածքը, հասարակության կենսագործունեության և զարգացման պատման-քաղաքական ասպեկտները, իրավական և քաղաքական ավանդույթները և սոցիալական նշանակություն ունեցող այլ արժեքներ:

Հետևաբար սույն ատենախոսությամբ փորձ է արվել վերլուծել սահմանադրա-իրավական կառուցակարգերն ու փաստացի գործով սոցիալական և քաղաքական ինստիտուտներն ու արժեքներն և դրանց փոխազդեցության հետ կապված հիմնխնդիրները:

Նշյալ հարցադրումների կապակցությամբ կատարված և սույն ատենախոսական աշխատանքում արտացոլված գիտական հետազոտությունը նպատակ ունի հայեցակարգային հիմքեր ստեղծել հասարակության իրավագիտակցության բարձրացման և հետագա սոցիալ-իրավական զարգացումներն ավելի կանխատեսելի դարձնելու համար, ինչպես նաև կարող է որոշակի նպաստ բերել խորհրդարանական կառավարման ձևի իմացության, քաղաքական գործընթացների վրա ազդող խորքային-կառուցակարգային գործոնների ընկալման և պետական

ապարատի գործնական աշխատանքի կազմակերպման ու իրականացման համար:

Թեմայի գիտական մշակվածության աստիճանը: Ազգային սահմանադրական իրավունքի գիտությունը որոշակիորեն անդրադարձել է պետական կառավարման ձևի ուսումնասիրությանը: Այս խնդրի գիտական մշակվածության գործում զգալի ներդրում ունեն Գ. Հարությունյանը, Գ. Դանիելյանը, Ն. Այվազյանը, Վ. Այվազյանը, Հ. Թովմասյանը, Ա. Հարությունյանը, Վ. Նազարյանը, Ա. Վաղարշյանը, Հ. Խաչատրյանը, Վ. Պողոսյանը և այլք:

Քննարկվող հիմնախնդիրը համակողմանի ուսումնասիրվել է նաև հետխորհրդային ռուսական սահմանադրական իրավունքի գիտության ներկայացուցիչների՝ Ս. Ավազյանի, Մ. Գորդիենկոյի, Ա. Սերեգինի, Յու. Սոլոմանիայի, Ա. Տրոֆիմովի, ինչպես նաև արևմտյան սահմանադրական և քաղաքական մտքի ականավոր ներկայացուցիչների՝ Մ. Դյուվերթեի, Ջ. Սարտորիի, Ջ. Կերիի, Մ. Շուգարտի, Ֆ. Ֆուկույամայի, Տ. Աձենօլուի և այլոց կողմից:

Հավուր պատշաճի արժևորելով ազգային և արտասահմանյան գիտնականների ներդրումը հետազոտվող թեմայի ուսումնասիրության գործում՝ այդուհանդերձ, գտնում ենք, որ սույն ատենախոսական աշխատանքը վերոնշյալներից որոշակիորեն առանձնանում է նրանով, որ Հայաստանում ազգային պետական շինարարության նոր մարտահրավերների պայմաններում վերաբերում է մեզանում պետական կառավարման ձևի սահմանադրաիրավական ամրագրման էվոլուցիային, էությանը և առանձնահատկություններին և դրանով պայմանավորված՝ որոշակի ներդրում է պետական շինարարության տեսության և օրենսդրական կարգավորման խնդրում:

Հետազոտության օբյեկտը: Հետազոտության օբյեկտը ՀՀ պետական կառավարման ձևն է Հայաստանի Երրորդ Հանրապետությունում և դրա էվոլուցիան:

Հետազոտության առարկան: Հետազոտության առարկան Հայաստանի Երրորդ Հանրապետությունում գործած կառավարման համակարգերի սահմանադրաիրավական բովանդակության և պետական-քաղաքական փաստացի կառուցակարգերի վերլուծությունը ու դրանց փոխազդեցության բացահայտումը, 2015թ. սահմանադրական բարեփոխումների սոցիալ-քաղաքական և իրավական ասպեկտների, ինչպես նաև դրանց հետ կապված առկա և հնարավոր ռիսկերի բացահայտումը:

Հետազոտության նպատակը: Սույն ատենախոսական աշխատանքի հիմնական նպատակն է պետական կառավարման ձևի ինստիտուտի սահմանադրաիրավական և իրավահամեմատական վերլուծության միջոցով ներկայացնել Հայաստանի Երրորդ Հանրապետության պետական կառավարման ձևի սահմանադրական էվոլուցիան՝ բացահայտելով պետական կառավարման համակարգի (ձևի) զարգացման փուլերի տրամաբանական և կառուցակարգային կապը և այս լույսի ներքո հիմնավորելով մեզանում կառավարման նոր խորհրդարանական ձևի սահմանադրաիրավական ամրագրման արդարացվածությունը և ներկայացնելով խորհրդարանական կառավարման համակարգի գործնական իրացմանը խոչընդոտելու ներուժ ունեցող գործոնները:

Հետազոտության խնդիրները: Հետազոտության խնդիրներն են՝ ներկայացնել Հայաստանի Հանրապետության անկախության սկզբնական փուլում պետաիշխանական համակարգի ձևավորման ինստիտուցիոնալ առանձնահատկությունները և կառավարման ձևի տեսակային ընտրության վրա ազդող իրավաքաղա-

քական և կառուցակարգային պայմանները, ուրվագծել Հայաստանի Երրորդ Հանրապետության պետական կառավարման համակարգի մոդելների հաջորդայնության իրավաքաղաքական օրինաչափությունները, Հայաստանում կիսանախագահականից խորհրդարանական համակարգի անցման համատեքստում վեր հանել կիսանախագահական կառավարման ձևի գործնական և կառուցակարգային թերությունները՝ այդ թվում միջազգային լավագույն փորձի համատեքստում, վերլուծելով պետական կառավարման ձևի սահմանադրաիրավական ամրագրման փորձը Հայաստանի Հանրապետությունում՝ ներկայացնել Հայաստանի Հանրապետության ազգային պետական շինարարության ներկա փուլում խորհրդարանական կառավարման համակարգի ներդրման հիմնավորումները, համակարգված՝ ըստ պետաիշխանական հարաբերությունների հիմնական սուբյեկտների՝ գատորոշել 2015թ. սահմանադրական բարեփոխումների արդյունքում սահմանված խորհրդարանական համակարգի կառուցակարգային դրսևորումներն ու հնարավոր ռիսկերը, առաջադրել դրանց հաղթահարման տարբերակներ և կատարել գործնական առաջարկներ:

Հետազոտության գիտական նորույթը: Սույն ատենախոսության գիտական նորույթն այն է, որ սահմանադրական ուսմունքների և սահմանադրականության արդի ժամանակաշրջանի զարգացումների հիման վրա ներկայացվել է Հայաստանի Երրորդ Հանրապետության կառավարման ձևի էվոլուցիան՝ վերլուծելով Հայաստանում պետաիշխանական համակարգի զարգացման պատմաիրավական փուլերի միջև փոխադարձ կապը և զարգացման միտումները, ինչպես նաև պետական կառավարման ձևի ուսումնասիրությունը և ինստիտուցիոնալ գնահատականը տրվել է ոչ միայն հիմք ընդունելով ձևական-ամրագրված կառուցակարգերը, այլև հաշվի առնելով իշխանավարման համակարգի ներքին բովանդակության և զարգացման տրամաբանության վրա ազդող իրավական, քաղաքական, տնտեսական, մշակութային և այլ հանգամանքներ: Սույն համատեքստում ուրույն ձևով է ներկայացվել նաև Հայաստանի Հանրապետությունում գործած կառավարման համակարգերի դասակարգումը:

Սույնի համատեքստում պաշտպանության են ներկայացվել հետևյալ դրույթները.

1. 2005թ. Սահմանադրական բարեփոխումներից սկսած՝ Հայաստանում պետական իշխանության համակարգի կառուցակարգային տրամաբանությունն ընթացել է քաղաքական համակարգում անհատների դերի թուլացման և քաղաքական ու պետական ինստիտուտների ամրապնդման սահմանադրական հիմքերի ձևավորման ուղղությամբ: 2015թ. Սահմանադրական փոփոխություններից հետո մեզանում հաստատվեց լիարժեք կոլեգիալ-խորհրդարանական կառավարման համակարգ, որի պաշտոնական հիմնավորումներից հետևում է, որ այդպիսով պետական կառավարման նախորդ ձևերի հայաստանյան մոդելները համարվել են անարդյունավետ: Սրանից բխում է, որ Հիմնական օրենքի վերջին փոփոխություններից հետո զոնե տեսանելի ապագայի կտրվածքով Հայաստանի պետաիշխանական և քաղաքական համակարգերի զարգացման և փոխակերպման վեկտորն անխուսափելիորեն պետք է հանգի քաղաքական և սահմանադրական մշակույթի վերափոխման, հասարակության մեջ Սահմանադրության տեքստի կանխադրույթներին համարժեք արժեքանության ձևավորման ուղղությամբ՝ ելնելով այն հասկացողությունից, որ Սահմանադրության դրույթներին համարժեք և կայուն քաղաքական պրակտիկայի և, ընդհանուր առմամբ, սահմանադրական մշակույթի ձևավորումը խիստ կարևոր է կառավարման համակարգի սահմանադրական կառուցակարգերի բովանդակության ամբողջական իրացման համար:

Պետական կառավարման հետագա սահմանադրական փոփոխությունը մեզ կվերադարձնի արդեն իսկ փորձարկված և իրենց չարադարացրած համակարգերին, ինչը բացասաբար կազդի սահմանադրական պետականության կայուն ավանդույթների ձևավորման և հասարակության կենսագործունեության *modus vivendi*-ի աստիճանական բյուրեղացման գործընթացի վրա:

2. Չնայած ձևական Սահմանադրության որպես նորմատիվ ակտի ու ժողովրդավարական քաղաքական պրակտիկայի ավանդույթների բացակայությանը՝ 1991-1995թթ. նախագահական կառավարման համակարգը, որոշ թերություններով հանդերձ, շատ ավելի հավասարակշռված էր, քան 1995թ. Սահմանադրությամբ հաստատված պաշտոնապես կիսանախագահական, իսկ իրականում գեր-նախագահական համակարգը: Ավելին՝ նախքան Սահմանադրության ընդունումը գործող պետաիշխանական համակարգի չապանոտածման և դրա հենքի վրա իշխանավարման նոր կառուցակարգերի սահմանադրական ամրագրման պարագայում շատ հավանական է, որ Հայաստանում տեղի չունենար կառավարման համակարգի գերկետրոնացում և անձնավորում, քանի որ նախագահական կառավարման համակարգը, այդ թվում դրա հայաստանյան մոդելը պարունակում էր անհրաժեշտ երաշխիքներ մի կողմից անձնական ուժեղ իշխանություն և դրանից բխող որոշակի պատասխանատվություն ունեցող Նախագահի ինստիտուտի, իսկ մյուս կողմից ընդարձակ լիազորություններով ներկայացուցչական քաղաքական մարմնի՝ խորհրդարանի համագոյակցության և փոխհակակշռման համար: Դա նշանակում է, որ անհրաժեշտ ինստիտուցիոնալ հիմքեր առկա կլինեին նաև քաղաքական կուսակցությունների զարգացման համար, ինչը կոլեգիալ իշխանավարման անհրաժեշտ նախապայմաններից և գործոններից մեկն է:

3. Փոփոխված Սահմանադրությունում կամ Ընտրական օրենսգրքում վարչապետի թեկնածուի՝ իշխող կուսակցության ընտրական ցուցակում ընդգրկված լինելու կամ իշխող կուսակցության անդամ հանդիսանալու պահանջի բացակայությունը նվազեցնում է ժողովրդի մասնակցությունը գործադիր իշխանության ձևավորմանը և ստեղծում է հանրությանը ոչ հաշվետու կառավարության ձևավորման վտանգ, քանի որ վարչապետ կարող է նշանակվել հանրությանն անհայտ կամ հանրության մոտ բավարար վստահություն չվայելող անձ, ով, չլինելով կուսակցության ընտրական ցուցակում կամ, ընդհանրապես չպատկանելով իշխող կուսակցությանը, կաշկանդված չի լինի ոչ ժողովրդի տված մանդատով և ոչ էլ կուսակցական կարգապահությամբ: Հետևաբար զարգացման խնդիրներ ունեցող հայրենական կուսակցական համակարգի պարագայում ժողովրդի ոչ բավարար ներգրավվածությունը վարչապետի որպես գործադիր իշխանության գլխի ընտրությանը կարող է հանգեցնել ոչ թափանցիկ կառավարմանն ու ստվերային իշխանավարման երևույթների առաջացմանը:

Հաշվի առնելով գործող իրավակարգավորման պայմաններում վարչապետի անձի հետ կապված նշյալ ռիսկերը՝ նպատակահարմար կլինի փոփոխություն կատարել Ընտրական օրենսգրքում և Ազգային ժողովի ընտրություններից առաջ կուսակցությունների և դաշինքների համար առնվազն սահմանել պահանջ հրապարակել վարչապետի իրենց թեկնածուին կամ Ընտրական օրենսգրքով սահմանել, որ կուսակցության կամ դաշինքի համապետական ցուցակի առաջին համարով նշված անձը հանդիսանում է այդ քաղաքական ուժի վարչապետի թեկնածուն:

Կարևոր է նաև հաշվի առնել մեկ ընտրական շրջափուլի ընթացքում Կառավարության հրաժարականի և նոր Կառավարության ձևավորման պարագայում Ազգային ժողովի կողմից նշանակվող վարչապետին առաջադրվող քաղաքական

չափանիշների սահմանադրական և օրենսդրական բացակայության հարցը: Սույն խնդիրը ոչ պակաս կարևոր է, քանի որ վարչապետի ընտրության ժողովրդավարական ընթացակարգի և հանրային հաշվետվողականության լիարժեք ապահովման համար անհրաժեշտ է նկատի առնել բոլոր հնարավոր հիմնական քաղաքական սցենարները: Սույն պարագայում, թերևս, կարելի է Ազգային ժողովի կանոնակարգ-սահմանադրական օրենքում նախատեսել պահանջ, որպեսզի վարչապետի հրաժարականի պարագայում նոր ձևավորվող կառավարության ղեկավար կարող է լինել միայն համապատասխան կուսակցության, դաշինքի կամ կոալիցիայի անդամ կուսակցությունների ընտրական ցուցակներում ներառված անձանցից մեկը:

4. Անվտանգության խորհրդի սահմանադրական կարգավիճակը՝ որպես պաշտպանության ոլորտում պետական քաղաքականության հիմնական ուղղությունները մշակող պետական մարմին, առաջացնում է կառուցակարգային ռիսկեր այն իմաստով, որ կարող է առաջացնել Կառավարության և Անվտանգության խորհրդի լիազորությունների կոլիզիա և կրկնորոշում: Խնդիրը նրանում է, որ համաձայն ՀՀ Սահմանադրության Կառավարությունը գործադիր իշխանության բարձրագույն մարմինն է և իր ծրագրի հիման վրա մշակում և իրականացնում է պետության ներքին և արտաքին քաղաքականությունը: Այսինքն՝ պետության քաղաքականության՝ որպես պետաիշխանական համակարգի գործառնման ուղեհիշների և սկզբունքների համակցության որոշումը վերապահված է Կառավարությանը՝ որպես գործադիր իշխանության համակարգի ուղղահայացի գլուխ կանգնած պետական ինստիտուտի: Սակայն, միաժամանակ, պաշտպանության քաղաքականության մշակման գործառույթը փաստացի վերապահված է Անվտանգության խորհրդին, որը, թեև գլխավորում է վարչապետը, սակայն այն ունի բոլորովին այլ կազմ և ներկայացուցչականության և, հետևաբար, պատասխանատվության առավել նվազ մակարդակ, ինչպես նաև որպես այդպիսին ուղղակի քաղաքական պատասխանատվություն չի կրում խորհրդարանի առջև: Հատկապես վերջին հանգամանքը խնդրահարույց է Անվտանգության խորհրդի՝ ժողովրդավարական սկզբունքներին համապատասխան հաշվետվողականության ապահովման տեսանկյունից: Բացի այդ, Սահմանադրության տեքստից պարզ չէ, թե որն է այն բաժանարար գիծը, որը տարբերակում է պաշտպանական քաղաքականության ոլորտում Կառավարության և Անվտանգության խորհրդի լիազորությունները, որպիսի հանգամանքը, մեր կարծիքով, հակասում է Սահմանադրությամբ գործադիր իշխանության համակարգին հաղորդվող ներքին տրամաբանությանն այն իմաստով, որ ըստ սահմանման, պաշտպանության քաղաքականության մշակողն ու իրականացնողը ևս պետք է լիներ Կառավարությունը, կամ առնվազն, պաշտպանության ոլորտում գործադիր իշխանության այս երկու մարմինների լիազորություններն ու փոխգործակցության հիմքերը պետք է հստակորեն ամրագրված լինեին Սահմանադրությամբ:

Հետևաբար, գտնում ենք, որ նախընտրելի կլինի որոշակի երաշխիքներ նախատեսել առնվազն օրենսդրական մակարդակում՝ ապահովելու համար Անվտանգության խորհրդի գործունեության թափանցիկությունն ու հաշվետվողականությունը: Օրինակ կարելի է Անվտանգության խորհրդի մասին օրենքով սահմանել Անվտանգության խորհրդի նախագահի կամ Անվտանգության խորհրդի քարտուղարի պարտականությունը խորհրդի գործունեության վերաբերյալ տարեկան հաղարդմամբ հանդես գալ Ազգային ժողովում, իսկ Ազգային ժողովի կանոնա-

կարգ-օրենքով սահմանել այդ հաղորդման ներկայացման, Ազգային ժողովում դրա քննարկման կարգը: Բացի այդ, կարելի է նույն Անվտանգության խորհրդի մասին օրենքով սահմանել, որ Ազգային անվտանգության խորհրդում որոշումների ընդունման ժամանակ վճռորոշ ձայն ունի վարչապետը: Նման կերպ կընդգծվի վարչապետի՝ որպես Կառավարության ղեկավարի ուղղորդող դերն Անվտանգության խորհրդում, ինչը թույլ կտա վարչապետին համակարգել ինչպես Կառավարության, այնպես էլ Անվտանգության խորհրդի գործունեությունը և ապահովել այս երկու մարմինների աշխատանքների ներդաշնակությունն ու փոխլրացումը:

5. Մեր կարծիքով, փոփոխված Սահմանադրությամբ ընդդիմության ինստիտուտին սահմանադրական կարգավիճակ տալը կարող է ժամանավրեպ լինել, քանի որ քաղաքական- կուսակցական մշակույթի չզարգացածության և ընդդիմության՝ որպես քաղաքական իշխանության որոշակի լծակների տիրապետող հանրային-իրավական կարևոր ինստիտուտի չկայացածության և մեզանում ընդունված իշխող և ընդդիմադիր կուսակցությունների հաճախակի հանդիպող դաշինքային-կոալիցիոն միավորումների պայմաններում հնարավոր են դեպքեր, երբ Ազգային ժողովում ֆորմալ իմաստով և գործնականում չլինի ընդդիմադիր խմբակցություն, ինչը հակասության մեջ կմտնի Սահմանադրության հետ թուլացնելով նաև Հիմնական օրենքի և քաղաքական համակարգի լեգիտիմության աստիճանը:

6. Ընտրական օրենսգրքով սահմանված՝ կայուն խորհրդարանական մեծամասնության ձևավորման կարգն առերևույթ հակասում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 2-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված ժողովրդաիշխանության սկզբունքին և 89-րդ հոդվածի 3-րդ մասին, որոնց համադրված վերլուծությունից բխում է, որ կայուն խորհրդարանական մեծամասնությունը պետք է ձևավորվի ընտրությունների արդյունքում՝ ուղղակիորեն կամ ընտրությունների արդյունքերով խորհրդարան անցած քաղաքական ուժերի կոալիցիայի միջոցով՝ հիմք ընդունելով ընտրողների կողմից կուսակցություններին կամ դաշինքներին տրված ձայների բաշխվածությունը: Մինչդեռ Ընտրական օրենսգրքով սահմանված կարգավորման պարագայում առաջանում է որոշակի անհամապատասխանություն ընտրական կորպուսի կամ ժողովրդի քաղաքական կամահայտնության և խորհրդարանում ձևավորված քաղաքական ուժերի հարաբերակցության միջև: Այլ կերպ ասած՝ ստացվում է, որ քաղաքական ուժը կամ կոալիցիան ձեռք է բերում կայուն խորհրդարանական մեծամասնություն՝ ի հեճուկս ընտրողների կամքի: Ուստի՝ նման իրավիճակը հանգեցնում է ընտրողների ձայների ոչ համամասնական բաշխմանը և կայուն մեծամասնություն ստացած քաղաքական ուժի համեմատությամբ մյուս ուժերին տրված ձայների նկատմամբ անհավասար վերաբերմունքի:

Առկա իրավակարգավորման ռիսկերի չեզոքացման համար, մեր կարծիքով, առավել նպատակահարմար է վերացնել Ընտրական օրենսգրքում ամրագրված խորհրդարանական մեծամասնության ձևավորման բոնուսային տարբերակը: Այդ դեպքում կայուն խորհրդարանական մեծամասնությունը կձևավորվի ժողովրդի կամքին համապատասխան. կայուն խորհրդարանական մեծամասնություն ձևավորելու համար քաղաքական ուժից կպահանջվի մանդատների ընդհանուր թվի 54 տոկոսը բոլոր դեպքերում ստանալ ուղղակիորեն ընտրությունների արդյունքներով: Հետևաբար, Ընտրական օրենսգրքով նախատեսված կոալիցիոն բանակցություններ կամ երկրորդ փուլ տեղի կունենա, եթե քաղաքական ուժերից և ոչ մեկը չի ստացել անդատների առնվազն 54 տոկոսը, կամ չի ձևավորվել այնպի-

սի կռաւիցիա, որը կտիրապետի նշված տոկոսային հարաբերութեամբ պատգամավորական մանդատներ:

Նման կառուցակարգի պարագայում երկրորդ փուլում հաղթած կուսակցութիւնը, ի լրումն ընտրութիւնների առաջին փուլում իր ստացած մանդատների, կստանա այնքան մանդատ, որքան նրան անհրաժեշտ է կայուն խորհրդարանական մեծամասնութիւն ձևավորելու համար:

7. Մեր կարծիքով, փոփոխված Սահմանադրութեամբ ամրագրված Նախագահի՝ որպէս Սահմանադրութեան երաշխավորի սահմանափակ դերը պետական իշխանութեան սահմանադրական համակարգի ձևավորման գործընթացում բավարար երաշխիքներ չի ստեղծում այս հարցում Ազգային ժողովի և, մասնավորապէս, խորհրդարանական մեծամասնութեան քաղաքական կամքը հակակշռելու և որպէս սահմանադրակարգի պաշտպան և «արբիտր»՝ պետական իշխանութեան մարմինների համակարգի սահմանադրական վարքագծին նպաստելու համար: Մասնավորապէս, Նախագահը գրեթէ չունի, այսպէս կոչված, սեփական լիազորութիւններ, որոնց իրացումը կախված չլինի պետական այլ ինստիտուտներից, և որոնք, լինելով Նախագահի ինքնավար կամքի իրացման արդյունք, ունենան ինքնուրոյն իրավական հետևանքներ:

8. Խորհրդարանական ընտրութիւններից արդյունքներով վարչապետի թեկնածուի առաջադրումը կամ փաստացի նշանակման՝ փոփոխված Սահմանադրութեամբ նախատեսված կարգը խնդրահարույց է, քանի որ կատարվում է ոչ թե ամբողջ խորհրդարանի կողմից, այլ՝ խորհրդարանի քաղաքական մեծամասնութեան, փաստացի՝ մեկ քաղաքական կուսակցութեան կամ դաշինքի կողմից: Ընդ որում, դատելով Սահմանադրութեան վերոնշյալ հոդվածի ձևակերպումից, խորհրդարանական մեծամասնութեան կողմից վարչապետի թեկնածուի առաջադրումը չի կատարվելու խորհրդարանի անունից, ինչն առավել ևս ընդգծում է, որ վարչապետի թեկնածուն չի հանդիսանում խորհրդարանի կողմից առաջադրված թեկնածու, այլ՝ մեկ քաղաքական ուժի՝ թեկուզև խորհրդարանաւում մեծամասնութիւն ունեցող: Խորհրդարանական մեծամասնութիւն ունեցող քաղաքական ուժը չի հանդիսանում պետական իշխանութեան ինքնուրոյն և ինքնաբավ մարմին ու ներառված չէ իշխանութեան թերից և ոչ մեկում, այլ ընդգրկված է խորհրդարանի համակարգում՝ որպէս օրենսդիր մարմնի կառուցվածքային տարրերից մեկը: Ուստի՝ առաջ է գալիս նշված կարգի սահմանադրականութեան հարցը. արդյո՞ք սահմանադրական ինստիտուտ հանդիսացող և պետական իշխանութեան գործադիր թեկն պատկանող վարչապետը կարող է առաջադրվել պետական մարմնի սահմանադրական կարգավիճակ չունեցող սուբյեկտի կողմից, և երբ խորհրդարանական կառավարման համակարգում վարչապետի նշանակման կամ հաստատման լիազորութիւնը պատկանում է խորհրդարանին:

Վերոնշյալի հիման վրա գտնում ենք, որ առավել նախընտրելի կարող էր լինել իշխող մեծամասնութեան կողմից իր թեկնածուին Ազգային ժողովի հաստատմանը ներկայացնելու սահմանադրական ընթացակարգի նախատեսումը կամ ընտրութիւններին մասնակցող յուրաքանչյուր կուսակցութեան և դաշինքի կողմից վարչապետի իր թեկնածուին նախքան ընտրութիւնները Կենտրոնական ընտրական հանձնաժողովում գրանցելու պարտականութեան ամրագրումն Ընտրական օրենսգրքում, որի պարագայում ընտրութիւնների արդյունքներով հաղթող ձանաչված քաղաքական ուժի վարչապետի թեկնածուն ինքնաբերաբար՝ իրավունքի ուժով կդառնար վարչապետ՝ առանց ընտրութեան կամ նշանակման ձևական ընթացակարգի:

9. << Սահմանադրութեան 155-րդ հոդվածի 4-րդ մասի իրավակարգավորումը,

որով զինված ուժերի գերագույն հրամանատարի կարգավիճակը պատերազմի ժամանակ վերապահվում է վարչապետին, առաջացնում է որոշակի անհատա-կություն, որը հղի է պաշտպանության ոլորտում իշխանական հարաբերությունների խաթարման լուրջ վտանգով: Մասնավորապես, հայտնի է, որ հայ-ադրբեջանական զինված հակամարտությունը դադարեցվել է ՀՀ-ի, Արցախի և Ադրբեջանի միջև 1994թ. մայիսի 5 –ին Բիշքեկում կնքված՝ հրադադարի մասին արձանագրությամբ: Մինչդեռ, միջազգային իրավունքում հրադադարի համաձայնագիրը չի համարվում պատերազմի կամ զինված հակամարտության ամբողջական և անվերապահ ավարտ ամրագրող իրավական ակտ, և փաստացի պատերազմական դրությունը շարունակվում է, սակայն նվազ ինտենսիվությամբ: Պատերազմի պաշտոնական ավարտն ամրագրվում է հակամարտող կողմերի միջև կնքվող և վավերացվող խաղաղության համաձայնագրով: Հետևաբար 1994թ. ի վեր Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի միջև պատերազմական դրությունը շարունակվում է, սակայն՝ առանց լայնամասշտաբ ռազմական գործողությունների վերսկսման:

Փաստորեն, միջազգային իրավակարգավորման տեսանկյունից ստացվում է, որ Հայաստանի և Ադրբեջանի միջև պատերազմը շարունակվում է, սակայն, մյուս կողմից, եթե պատերազմի կամ զինված հակամարտության առկայությունը որոշենք՝ հենվելով ներպետական սահմանադրական կարգի վրա, ապա ՀՀ Սահմանադրության 119-րդ հոդվածի ուժով Կառավարության կողմից հայտարարված ռազմական դրության բացակայության դեպքում պատերազմ, որպես այդպիսին, առկա չէ: Իրավական այս կոլիզիայի համատեքստում գերագույն հրամանատարի կարգավիճակի գործողությունը դառնում է խնդրահարույց: Արդյո՞ք վարչապետը, քանի դեռ Ադրբեջանի հետ խաղաղության պայմանագիր կնքված և վավերացված չէ, հանդիսանալու է գերագույն հրամանատար՝ զլխավորելով ՀՀ զինված ուժերը, թե՞, այդուհանդերձ, Կառավարության կողմից ռազմական դրություն չհայտարարելը և Ազգային ժողովի կողմից Կառավարության այդ որոշմանը հավանություն չտալը հիմք է պատերազմի բացակայությունը փաստելու համար: Սույն հարցը խիստ կարևոր է, քանի որ վարչապետի՝ գերագույն հրամանատարի կարգավիճակի գործողության ժամանակային ընդգրկումը պայմանավորում է պաշտպանության ոլորտի իրավաբանության սուբյեկտների փոխհարաբերությունների բնույթն ու բովանդակությունը: Սահմանադրությամբ այս խնդրի ոչ միանշանակ կանոնակարգումն ըստ էության կոնֆլիկտագեն է և կարող է լուրջ խնդիրներ առաջացնել զինված ուժերի կառավարման աստիճանակարգության և դրա վրա հիմնված իշխանական հարաբերությունների սահմանադրականության համար: Ուստի՝ նման իրավիճակից խուսափելու լավագույն տարբերակը կարող է լինել Սահմանադրության մեջ փոփոխություն կատարելը և վարչապետին զինված ուժերի գերագույն հրամանատարի մշտական կարգավիճակ վերապահելը:

Հետազոտության մեթոդաբանական հիմունքները: Սույն ատենախոսական աշխատանքի հետազոտության համընդհանուր մեթոդներն են՝ դիալեկտիկայի օրենքներն ու ստորոգությունները, գիտական ճանաչողության ժամանակակից մոտեցումները, ինչպես նաև հատուկ մասնագիտական՝ իրավաբանական վերլուծության, իրավահամեմատական, համակարգային-կառուցվածքային վերլուծության մեթոդները:

Հետազոտության արդյունքների փորձարկումը: Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի յոթ հոդվածներում և քննարկվել են

Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի սահմանադրական իրավունքի ամբիոնի նիստերում:

ԱՏԵՆԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆՂԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածություն: Ներածության մեջ հիմնավորվում է ատենախոսության թեմայի արդիականությունը, ներկայացվում են գիտական մշակվածության աստիճանը, հետազոտության օբյեկտն ու առարկան, նպատակը և խնդիրները, ատենախոսական աշխատանքի մեթոդաբանական հիմքերը և գիտական նորույթը, ձևակերպված են պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները, հիմնավորվում է հետազոտության արդյունքների տեսական և գործնական նշանակությունը:

Ատենախոսության առաջին գլուխը կրում է «Հայաստանի Հանրապետության կառավարման համակարգն ու դրա էվոլյուցիան մինչև 2015թ. սահմանադրական բարեփոխումները» վերտառությունը և բաղկացած է երեք ենթազվիսից:

Առաջին ենթազվիսը կոչվում է «Հայաստանի Հանրապետության կառավարման ձևը և դրա կառուցակարգային համակարգը նախքան 1995թ. Սահմանադրության ընդունումը» և նվիրված է նախքան ՀՀ Սահմանադրության ընդունումն ընկած ժամանակաշրջանում Հայաստանի Հանրապետության պետաիշխանական մոդելների ուսումնասիրությանն ու վերլուծությանը, դրանց ձևավորման վրա ազդող այլալից գործոններին:

Սահմավորապես, հիմնավորվում է, որ Հայաստանի Հանրապետությունը, 1990թ. օգոստոսի 23-ին Անկախության հռչակագրի ընդունումից հետո փաստացի լինելով անկախ, ունեցել է խորհրդարանական կառավարման համակարգ, որը գործել է մինչև 1991թ. հոկտեմբեր ամիսը, երբ Հայաստանում տեղի ունեցավ Նախագահի առաջին ընտրությունը: Խորհրդարանական կառավարման ձևի իրավահայեցակարգային հիմքը կազմել է Անկախության հռչակագիրը, որը ժողովրդի անունից հանդես գալու բացառիկ իրավունքը վերապահում էր Հայաստանի Հանրապետության Պետազույն խորհրդին և սահմանում էր խորհրդարանի համակարգաստեղծ կարգավիճակի հիմնադրույթները, ինչպես նաև «Հայաստանի անկախության հռչակագրին համապատասխան ընդունված օրենսդրական ակտերի մասին» 1990թ. դեկտեմբերի 10-ին ընդունված սահմանադրական օրենքը, որի համաձայն ուժի մեջ էին մնում ՀԽՍՀ Սահմանադրության Հայաստանի անկախության հռչակագրին չհակասող դրույթները՝ այդ թվում խորհրդարանի կողմից կառավարության ձևավորման, խորհրդարանի առջև կառավարության պատասխանատվության և հաշվետվողականության ու խորհրդարան-կառավարություն փոխհարաբերությունները կարգավորող մնացյալ նորմերը: 1990-1991թթ. Պետազույն խորհուրդը հանդիսանում էր Հայաստանի Հանրապետության բարձրագույն ներկայացուցչական և օրենսդիր մարմինը, որին ենթարկվում և որին հաշվետու էին պետական իշխանության մյուս մարմինները:

Այնուհետև անցում է կատարվում 1991-1995թթ. Հայաստանի Հանրապետությունում գործած կառավարման համակարգին, որը նախագահական էր: Այն հիմնված էր գլխավորապես երկու՝ 1991թ. օգոստոսի 1-ին ընդունված «Հայաստանի Հանրապետության Նախագահի մասին» և 1991թ. նոյմբերի 11-ին ընդունված «Պետազույն խորհրդի մասին» սահմանադրական օրենքների վրա: Հեղինակի կողմից ուսումնասիրվում և վերլուծվում են Հայաստանի Հանրապետության պե-

տական կառավարման նախագահական համակարգի բնորոշ գծերը՝ դրանք համեմատելով նախագահական համակարգ ունեցող այլ պետությունների և, մասնավորապես, ԱՄՆ-ի պետաօրինակական կառուցակարգերի հետ, ինչպես նաև՝ առանձնահատկությունները՝ մասնավորապես, վարչապետի և Կառավարության ինստիտուտների առկայությունը և Գերագույն խորհրդի կողմից Կառավարությանն անվատառություն հայտնելը: Հիմնավորվում է, որ թեև նշված ինստիտուտները դասական իմաստով հատուկ չեն նախագահական կառավարման ձևին, սակայն որոշ նախագահական հանրապետություններում գործում են Կառավարության և վարչապետի ինստիտուտներ, և, բացի այդ, քննարկվող ժամանակաշրջանում Հայաստանում քաղաքական-իշխանական ինստիտուտների փաստացի կարգավիճակն ու քաղաքական իրողություններն այնպիսին էին, որ գործող համակարգի նախագահական տրամաբանությունն ու փիլիսոփայությունը, նշված առանձնահատկությունների հաշվառմամբ, չէր փոխվում:

Ենթազույխը եզրափակվում է այն եզրահանգմամբ, որ 1991-1995թթ. նախագահական համակարգն ինչ-որ իմաստով կարելի է համարել նահանջ Անկախության հռչակագրով սահմանված պառլամենտարիզմի և խորհրդարանի «գերակայության» սահմանադրական դրույթներից: Միևնույն ժամանակ վերոնշյալ օրենքների քննախուզությունը գալիս է վկայելու, որ դրանցով սահմանված նախագահական կառավարման ձևը, գուցե իր ոչ ավարտուն բնույթով հանդերձ, ինչպես նաև հաշվի առնելով քննարկվող ժամանակաշրջանում Հայաստանում ժողովրդավարական քաղաքական պրակտիկայի սաղմնային վիճակը, առավել հավասարակշռված էր և համապատասխանում էր իշխանությունների տարանջատման սահմանադրափրավական սկզբունքին՝ ի տարբերություն 1995թ. Սահմանադրությամբ նախատեսված անվանապես կիսանախագահական, իսկ իրականում գերնախագահական համակարգի:

Երկրորդ ենթազույխը կոչվում է «1995թ. խմբագրությամբ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը և կառավարման գերնախագահական համակարգը»: Սույն ենթազույխում խոսք է գնում կառավարման ձևի ընտրության և սահմանման չափանիշների վերաբերյալ:

Մասնավորապես, նշվում է, որ կառավարման ձևի ընտրության, այդ թվում պետական իշխանության բարձրագույն մարմինների սահմանադրական լիազորությունների որոշման, դրանց լիարժեք և պատշաճ իրացման, ինչպես նաև պետական կառավարման ձևի ճիշտ բնորոշման և դասակարգման հնարավորության վրա մեծ ազդեցություն ունեն ոչ միայն Սահմանադրությամբ ամրագրված կառուցակարգերը, երաշխիքները, այլև սոցիալ-իրավական, քաղաքական և նույնիսկ տնտեսական տարաբնույթ գործոններ՝ պետականության և ժողովրդավարության ավանդույթները, կուսակցական համակարգի զարգացածության աստիճանը, արդյունավետ գործող և արժանահավատ ընտրական համակարգը, նյութական բարիքների և ռեսուրսների արդարացի բաշխումն ու վերաբաշխումը հասարակությունում և որպես արդյունք՝ սոցիալական բեռավածության բացակայությունը կամ նվազ մակարդակը, քաղաքական և պետական գործիչների անձնական հատկանիշները, այլ պետության հետ ռազմական հակամարտության առկայությունը և այլն: Լայն իմաստով կառավարման ձևի ընտրությունը և փաստացի բովանդակությունը պայմանավորված է հասարակության և պետության սահմանադրական արժեքանության մակարդակով և առանձնահատկություններով, որոնք ընդգրկում են նաև վերը թվարկված հանգամանքները:

Այս իմաստով հեղինակն առաջարկում է տարբերակել սահմանադրականության արդի հայեցակարգը, որն ստացել է միջազգային ճանաչում և ամրագրված է հիմնարար միջազգային իրավական ակտերում և սահմանադրական արժեքանության ներպետական համակարգը, որը կարող է տարբերվել այն կատարյալ պոստուլատներից, որոնք տեղ են գտել միջազգային հանրաձանաչ փաստաթղթերում և հաճախ համարժեք արտացոլվել են նաև պետությունների սահմանադրություններում: Երկրորդ դեպքում տվյալ պետության և հասարակության արժեքանական կողմնորոշիչները կարող են ունենալ տարբերություններ, զարգացման ավելի ցածր մակարդակ, պատմա-մշակութային այլազան ակունքներ և այլն: Հարկ է նկատի ունենալ, որ գործնականում պետականորեն միավորված ցանկացած հասարակության սահմանադրական արժեքանության հիմքում ընկած են մարդկային համակեցության իրավական և բարոյական որոշակի արժեքներ, որոնք, ունենալով բազային ընդհանրություններ, այդուհանդերձ կրում են նաև տվյալ հանրության աշխարհընկալման և այդ թվում նաև իրավագիտակցության առանձնահատկությունների կնիքը:

Հաշվի առնելով այս ամենը՝ սահմանադրությունները կարող են նորմատիվ ամրագրում տալ հասարակության ներսում առկա status-quo-ին, այդ թվում պետական կառավարման ձևի էության մասով՝ անկախ նրանից, թե այն համապատասխանում է, թե չի համապատասխանում ազատական սահմանադրականության՝ միջազգայնորեն ընդունված ժամանակակից հայեցակարգին, կամ այսպես կոչված փաստացի սահմանադրությունը կարող է տարբերվել ձևական փաստաթղթում տեղ գտած իրավադրոյթներից և կառուցակարգերից: Հետևաբար, կախված նրանից, թե ինչպիսի փոխհարաբերության մեջ են գտնվում Սահմանադրությունն ու իրականությունը, պետական կառավարման համակարգերը կարող են ուղղակիորեն արտացոլել երկրում առկա քաղաքական իրողությունները՝ ժողովրդավարական, կամ բռնապետական, կամ Սահմանադրության տեքստի՝ պետա-իրավական հարաբերությունների սահմանադրական-կատարյալ մոդելի և փաստացի իրականության միջև կարող է առկա լինել լուրջ խզում: Սույն դեպքում խոսք է գնում այսպես կոչված ֆասադային ժողովրդավարությունների մասին:

Ենթազխում նաև քննարկվում են պետական կառավարման համակարգի ժողովրդավարության չափանիշները: Ըստ այդմ, եզրահանգվում է, որ կառավարման ձևերի ժողովրդավարական լինելու առանցքային ձևական չափանիշը դրա համապատասխանությունն է իշխանությունների տարանջատման սկզբունքին, իսկ բովանդակային-փաստացի չափանիշը՝ սահմանադրական մշակույթի և հասարակական հարաբերությունների սահմանադրականացման մակարդակը: Այս երկու չափանիշները մի կողմից հանդիսանում են պետական իշխանության բարձրագույն մարմինների համակարգի ձևավորման և պետաիշխանական ինստիտուտների միջև լիրագրությունների համաչափ բաշխման նորմատիվ-կառուցվածքային հիմքը, իսկ մյուս կողմից հասարակական կենսագոյի նկատմամբ սահմանադրական-նորմատիվ կանխադրույթների ներգործության և անշեղ իրացման նախապայմանները, որոնց խախտումն անխուսափելիորեն հանգեցնում է պետական համակարգի կառուցակարգային ձևախեղման՝ արտենախտությունում քննարկված այլ գործոնների հետ մեկտեղ հիմքեր ստեղծելով պետության բնութագրի փոփոխման համար՝ ժողովրդավարականից դեպի բռնապետական (ավտորիտար) և (կամ) ամբողջատիրական (տոտալիտար) կամ ֆասադային ժողովրդավարությունների (հիբրիդային քաղաքական ռեժիմների) ձևավորման հա-

մար և հակառակը:

Քննարկելով 1995թ. խմբագրությամբ ամրագրված պաշտոնապես կիսանախագահական կառավարման համակարգը՝ հեղինակը եկել է այն եզրահանգման, որ այն չի համապատասխանում պետական կառավարման ձևի ժողովրդավարության չափանիշներին, ինչպես նաև կիսանախագահական կառավարման համակարգի ակադեմիական չափորոշիչներին և միջազգային լավագույն փորձին: Սույն համատեքստում նշված ժամանակաշրջանում Հայաստանի Հանրապետության պետաիշխանական մոդելը հեղինակի կողմից համեմատության մեջ է դրվել կիսանախագահական կառավարման համակարգի տեսական հիմնադրույթների և կիսանախագահական այնպիսի կայացած պետությունների սահմանադրական և քաղաքական պրակտիկան, ինչպիսիք են՝ Ֆրանսիան և Պորտուգալիան:

Հեղինակի կողմից առաջարկվել է Հայաստանի 1995թ. խմբագրությամբ ամրագրված կառավարման համակարգը բնորոշել որպես գերնախագահական՝ հաշվի առնելով նաև այդպիսի համակարգերի վերաբերյալ ակադեմիական մոտեցումներն ու միջազգային պրակտիկան:

Ենթազխում անդրադարձ է կատարվել նաև Հայաստանում գերնախագահական կառավարման համակարգի սոցիալ-իրավական և քաղաքական նախադրյալներին: Ըստ այդմ, կատարելով կառավարման համակարգերի և ներքաղաքական իրողությունների փոխազդեցության վերլուծություն, հեղինակը գտնում է, որ Հայաստանի Հանրապետության պարագայում առկա էին սոցիալ-իրավական նախադրյալներ ուժեղ նախագահական իշխանության ձևավորման համար: Նախ՝ Հայաստանի Հանրապետությունը, հիմք ընդունելով նաև ժամանակակից անցումագիտության (տրանզիտոլոգիայի) մոտեցումները, գտնվում էր ժողովրդավարական անցման փուլում և չունեւր ժողովրդավարական ինստիտուտների զարգացած համակարգ: Նման պայմաններում օբյեկտիվորեն մեծանում է անձերի դերը քաղաքական գործընթացներում, և ձևավորվում է անձնակենտրոն քաղաքական իրողություններին համարժեք կառավարման համակարգ, որպիսին Հայաստանում հանդիսացավ գերնախագահական համակարգը:

Սահմանադրության 2005թ. խմբագրությամբ նախատեսված կիսանախագահական կառավարման ձևն ու դրա կառուցակարգային և ընթացակարգային թերությունները» վերտառությամբ երրորդ ենթազխումների անդրադարձ է կատարվում 2005թ. սահմանադրական բարեփոխումների սոցիալ-իրավական նախադրյալներին, որոնք կարելի է բաժանել երկու խմբի՝ ներքին և արտաքին: Ներքին այդպիսի գործոններից են, մասնավորապես, հետկյալները. Հայաստանում քաղաքական համակարգի զարգացումը, կուսակցությունների դերի բարձրացումն օբյեկտիվորեն ստեղծում էին մի միջավայր, որտեղ անհատի համակարգային նշանակությունը նվազում էր, և մեծանում էր կոլեգիալ կառավարման ինստիտուտների դերը՝ ի դեմս, մասնավորապես, խորհրդարանի և խորհրդարանի գործունեության հիմքը հանդիսացող կուսակցությունների: Այս առումով կարևոր էր նաև 2003թ.-ից գործող կոալիցիոն Կառավարության ինստիտուտը: Այս ամենը վկայում է Հանրապետության քաղաքական կյանքի առավել ներառական և բազմավեկտոր դառնալու մասին, ինչին համապատասխան՝ փոփոխության էր ենթարկվում նաև անձնակենտրոն և միաբևեռ քաղաքական պրակտիկան:

Արտաքին հիմնական նախադրյալներն էին 2001թ. Հայաստանի անդամակցումը Եվրոպայի խորհրդին և 2002թ. Ազգային ժողովի կողմից Մարդու իրա-

վունքների և հիմնարար ազատությունների մասին եվրոպական կոնվենցիայի վավերացումը, ինչը ժողովրդավարության և մարդու իրավունքների ոլորտում նոր պարտավորություններ դրեց Հայաստանի վրա:

Ենթազխում քննարկվում են 2005թ. սահմանադրական բարեփոխումներով նախատեսված այն հիմնական կառուցակարգերը, որոնք վերաբերում են կառավարման համակարգի փոփոխությանը և նպատակաուղղված էին սահմանափակել Նախագահի անձնական իշխանության ձևական կառուցակարգերը և որոշումների կայացման գործընթացն առավել ապակենտրոնացնել՝ դրանում մեծացնելով Ազգային ժողովի, վարչապետի և Կառավարության դերը:

Սույն համատեքստում կատարվել է այն եզրահանգումը, որ 2005թ. Սահմանադրական բարեփոխումները, թեև որոշակիորեն բարելավեցին մինչ այդ գործող գերնախագահական համակարգը և սահմանափակեցին Նախագահի լիազորությունները, այդուհանդերձ, Նախագահի ինստիտուտը, հաշվի առնելով նաև նրան սատարող քաղաքական մեծամասնությունը խորհրդարանում, շարունակել է գերակա դիրք զբաղեցնել պետական իշխանության համակարգում և էական ներազդեցություն ունենալ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների, ինչպես նաև անկախ մարմիններ հանդիսացող ինստիտուտների նկատմամբ:

Բացի այդ, կիսանախագահական կառավարման ձևի գործառնման պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ գործնականում այստեղ առկա են սահմանադրական կարգավորումներից տարաբնույթ շեղումներ, որոնք կարող են նաև հակոտնյա լինել կիսանախագահական կառավարման համակարգի փոխուփայությանն ու տրամաբանությանը: Որպես այդպիսին կարելի է մատնանշել Նախագահի կողմից կառավարության քաղաքական-ծրագրային ղեկավարման և ուղղորդման փաստը, որը չի բխում Սահմանադրության տառից և ոգուց: Իբրև սրա ապացույց կարելի է բերել հասարակական-քաղաքական գործնականում բոլոր հարցերով Նախագահի կողմից կառավարության նիստերը հրավիրելու և վարելու և ուղղակիորեն իր իրավասությանը չվերաբերող հարցերով վարչապետին և նախարարներին ցուցումներ և հանձնարարականներ տալու հանգամանքը, չնայած նրան, որ սահմանադրորեն Նախագահն իրավասու է համակարգել միայն արտաքին քաղաքականության, անվտանգության և պաշտպանության ոլորտները, հրավիրել և վարել կառավարության նիստեր նշված հարցերի շրջանակներում, ինչպես նաև կառավարության անդամներին հանձնարարականներ տալ այդ ոլորտների հետ կապված հարցերով: Այդպիսով Նախագահի ինստիտուտը որոշակիորեն ստվերում է վարչապետին՝ իրականացնելով նրա մի շարք գործառնություններ այդ թվում սոցիալ-տնտեսական քաղաքականության մշակման և իրականացման ապահովման մասով: Նմանապես, թեև 2005թ. խմբագրությամբ Սահմանադրությունը Նախագահին իրավունք է վերապահում վարչապետ նշանակել Ազգային ժողովում ներկայացված քաղաքական ուժերի հետ խորհրդակցության հիման վրա՝ նշանակելով խորհրդարանի մեծամասնության վստահությունը վայելող անձին, պրակտիկայում Նախագահն առավելապես տեղեկացրել է պատգամավորներին վարչապետի իր նախընտրած թեկնածուի վերաբերյալ, քան իր դիրքորոշումը պայմանավորել Ազգային ժողովի քաղաքական մեծամասնության դիրքորոշմամբ: Կարելի է բերել պետաիշխանական համակարգում Նախագահի փաստացի գերակա դիրքի գործնական դրսևորման այլ օրինակներ ևս (հրապարակավ Ազգային ժողովի կողմից քննարկվող օրինագծի

ընդունման վերաբերյալ խորհրդարանին ուղղորդող հայտարարություններ անելը, վարչապետի և նախարարների թեկնածություններն իշխող կուսակցությունում առաջադրելը և այլն):

Կիսանախագահական կառավարման ձևի իրացման կառուցակարգային շեղումները պայմանավորված են նաև ժողովրդավարական կոնսոլիդացման ոչ բավարար մակարդակով, այդ թվում անձնիշխանության ձևավորված ավանդույթով, որի հետևանքով հասարակության և քաղաքական վերնախավի կողմից ավելի մեծ կշիռ և հեղինակություն են վայելում անհատները, քան հանրային-պետական ինստիտուտները: 2005թ. սահմանադրական բարեփոխումներով ֆորմալ առումով փորձ արվեց լուծել այս խնդիրը՝ փորձ անելով որոշ չափով հավասարակշռել պետաիշխանական համակարգի սահմանադրական սուբյեկտների լիազորությունները, սակայն գործնական քաղաքականության ոլորտում անձնակենտրոն իշխանական համակարգի հիմնահարցը շարունակեց արդիական մնալ: Որպես արդյունք, երբ նման իրողությունները զուգորդվում են նաև օբյեկտիվորեն կիսանախագահական կառավարման ձևի ռիսկագեն գործոնների հետ, առաջանում են իշխանավարման տվյալ համակարգի բովանդակային խեղման լուրջ նախադրյալներ, ինչի արդյունքում պետական իշխանության իրականացումը կարող է դուրս գալ Սահմանադրությամբ նախատեսված շրջանակներից և զգալիորեն իրականացվել ոչ ֆորմալ կառուցակարգերի և ընթացակարգերի միջոցով:

Այսպիսով, ժամանակի ընթացքում, որոշ դրական փոփոխություններին զուգահեռ, ուրվագծվեցին Հայաստանի կիսանախագահական կառավարման ձևի որակական թերությունները: Ուստի՝ կիսանախագահական կառավարման ձևն այլևս կենսունակ չի կարող համարվել կուսակցական համակարգի հետագա զարգացման, պետական ինստիտուտների հավասարակշռված և փոխգործակցված գործունեության և համարժեք պատասխանատվության ապահովման ու Հայաստանի Հանրապետության սահմանադրական պետականության առջև ծառայած այլ համակարգային խնդրականների լուծման համար:

Սույն ենթազխում նաև առանձնացվում և քննական հետազոտության են ենթարկվում կիսանախագահական կառավարման համակարգի հիմնական հատկանիշները՝ առաջնային մանդատով երկու պետական ինստիտուտների առկայությունը, քաղաքական համակարգի «ձկունությունը», կառավարման համակարգի կայունությունը, նախընտրելիություն ճգնաժամային իրավիճակներում:

Ատենախոսության երկրորդ գլուխը կազմված է երկու ենթազխից և կոչվում է «Խորհրդարանական կառավարման ձևը Հայաստանի Հանրապետությունում և դրա զարգացման հիմնախնդիրները 2015թ. Սահմանադրական բարեփոխումների համատեքստում»:

Առաջին ենթազխուխը կրում է «2015թ. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների արդյունքում սահմանված կառավարման խորհրդարանական համակարգի (ձևի) հիմնավորումներն ու կառուցակարգային լուծումները» վերտառությունը:

Ենթազխում վերլուծվում են Հայաստանի Հանրապետությունում խորհրդարանական կառավարման ձևի ներդրման սոցիալ-քաղաքական, իրավական և պատմական նախադրյալները, ներկայացվում են Հայաստանում խորհրդարանական կառավարման համակարգի սահմանադրաիրավական ամրագրման կառուցակարգային հատկանիշներն ու առանձնահատկությունները:

Մասնավորապես որպես մեր Հանրապետությունում խորհրդարանական կառա-

վարման համակարգի սահմանադրաիրավական ամրագրման սոցիալ-քաղաքական նախադրյալ նշվում է ընդարձակ ձևական և փաստացի լիազորություններ ունեցող Նախագահի ինստիտուտի պայմաններում պետաիշխանական համակարգի հետագա ապակենտրոնացման, կուսակցությունների ինստիտուցիոնալ կայացման խոչընդոտները, քաղաքական էլիտայի շրջանում նոր համակարգային կոնսեսուսի ձևավորման և այդպիսով իշխանության համար մրցակցության փոխադարձաբար ընդունելի կանոնների սահմանման անհրաժեշտությունը, քաղաքական համակարգի անտագոնիզմի հաղթահարումը: Սույն համատեքստում որպես նշված գործոնների դիտարկման հայեցակարգային հիմք առաջարկվում է էլիտաների տեսությունը:

Որպես իրավական նախադրյալ առանձնացվում է << Անկախության հռչակագիրը, որը որպես ժողովրդի առաջնային մանդատ ունեցող պետական ինստիտուտ սահմանելով խորհրդարանը, նորմատիվ հիմքեր էր ստեղծում Հայաստանում խորհրդարանական կառավարման համակարգի ձևավորման համար: Սույն համատեքստում հեղինակի կողմից քննարկվում է Անկախության հռչակագրին հաջորդած ժամանակաշրջանում Հայաստանում սահմանադրական ամրագրում ստացած կառավարման համակարգերի լիզիտիմության հարցը՝ ելնելով Անկախության հռչակագրին դրանց առերևույթ հակասությունից:

Պատմաքաղաքական նախադրյալների թվին են դասվում Հայաստանի միապետական և եկեղացապետականության ժամանակաշրջանից Հայաստանում գործած խորհրդակցական կառավարման և տարածքային ինքնակառավարման տարրերը և այդ թվում ազգային –եկեղեցական ժողովները, ինչպես նաև հայ իրավական մտքի կողմից ձևակերպված խորհրդարանական կառավարման համակարգի տեսական-հռչակագրային հիմնադրույթները՝ ի դեմս Շահամիր Շահամիրյանի և Մովսես Բաղդամյանի հայեցակարգային աշխատությունների, հայ ավանդական կուսակցությունների ծրագրային հիմնադրույթների, Հայաստանի Առաջին և Երկրորդ Հանրապետությունների կառավարման սահմանադրական համակարգերի:

Ենթազվխում համակողմանիորեն քննության է առնվում 2015թ. Սահմանադրական բարեփոխումների արդյունքում ձևավորվող խորհրդարանական կառավարման համակարգի սահմանադրական հիմունքները՝ դրանք դիտարկելով՝ ըստ կառավարման համակարգի իշխանական սուբյեկտների՝ Նախագահի, Ազգային ժողովի և Կառավարության:

Երկրորդ ենթազվխում, որը կոչվում է «Հայաստանի Հանրապետության խորհրդարանական կառավարման ձևի սահմանադրաիրավական կառուցակարգերի ռիսկերը և դրանց հաղթահարման եղանակները», վերլուծության են ենթարկվել Հայաստանի Հանրապետության նոր՝ խորհրդարանական կառավարման համակարգի կառուցակարգային ռիսկերը, գերազանցապես ներկայացված են որպես պաշտպանության ներկայացվող դրույթներ:

Ենթազվուխն ամփոփվում է այն դիտարկմամբ, որ Հայաստանում կառուցակարգային առունով գրագետ և հավասարակշռված ու հայ ժողովրդի սահմանադրական զարգացման ավանդույթներից բխող պետական կառավարման խորհրդարանական մոդելի ներդրումը միանգամայն արդարացված է, սակայն դրա լիարժեք ինքնաիրացումն ու Հայաստանի քաղաքական պրակտիկայի համարժեք վերափոխումը համեմատաբար երկարաժամկետ խնդիր է: Եվ այս համատեքստում ներկայացված ռիսկային գործոնների վերացումը կնպաստի խորի-

դարական կառավարման համակարգի առավել լիարժեք և ժողովրդավարական գործառնմանը:

Եզրակացության մեջ հեղինակն ընդհանրացված ներկայացրել է հետազոտության կարևոր հետևությունները:

1. Պետության կառավարման ձևի ընտրությունը, դրա բովանդակությունը և գործնականում իրացման մակարդակը պայմանավորված են միմյանց փոխլրացնող բազմաթիվ գործոններով՝ պատմական, քաղաքական, իրավական, կրոնական, սոցիալ-մշակութային: Ըստ այդմ, կառավարման ձևը դիտարկվում է կա՛մ որպես հորիզոնական (իշխանության ապակենտրոնացված համակարգ), կա՛մ ուղղահայաց (իշխանության կենտրոնացված համակարգ) համակարգ: Առաջինը բնորոշ է կառավարման խորհրդարանական ձևին, իսկ երկրորդը՝ կառավարման նախագահական կամ կիսանախագահական համակարգին:

2. Կառավարման ձևերի ժողովրդավարական լինելու առանցքային ձևական չափանիշը դրա համապատասխանությունն է իշխանությունների տարանջատման սկզբունքին, իսկ բովանդակային-փաստացի չափանիշը՝ սահմանադրական մշակույթի և հասարակական հարաբերությունների սահմանադրականացման մակարդակը: Այս երկու չափանիշները մի կողմից հանդիսանում են պետական իշխանության բարձրագույն մարմինների համակարգի ձևավորման և պետաիշխանական ինստիտուտների միջև լիրագործությունների համաչափ բաշխման նորմատիվ-կառուցվածքային հիմքը, իսկ մյուս կողմից հասարակական կենսագոյի նկատմամբ սահմանադրական-նորմատիվ կանխադրույթների ներգործության և անշեղ իրացման նախապայմանները, որոնց խախտումն անխուսափելիորեն հանգեցնում է պետական համակարգի կառուցակարգային ձևախեղման՝ ատենախոսությունում քննարկված այլ գործոնների հետ մեկտեղ հիմքեր ստեղծելով պետության բնութագրի փոփոխման համար՝ ժողովրդավարականից դեպի բռնապետական (ավտորիտար) և (կամ) ամբողջատիրական (տոտալիտար) կամ ֆասսիզմի ժողովրդավարությունների (հիբրիդային քաղաքական ռեժիմների) ձևավորման համար և հակառակը:

3. Հայաստանի Երրորդ Հանրապետության սահմանադրական զարգացման ընթացքում Հայաստանում գործել են հանրապետական կառավարման ձևի բոլոր հիմնական ժողովրդավարական տեսակները՝ նախագահական, կիսանախագահական և խորհրդարանական:

1990թ. օգոստոսի 23-ին Գերագույն խորհրդի կողմից ընդունված Անկախության հռչակարգով Հայաստանում փաստացի սահմանվել է խորհրդարանական կառավարման համակարգ՝ ապագայում ընդունվելիք Սահմանադրությունում և համապատասխան օրենսդրությունում դրա կիրարկման պահանջով: Հետևաբար 1995թ. Սահմանադրությամբ և դրա 2005թ. փոփոխություններով Նախագահի ուժեղ իշխանությամբ անձնակենտրոնության ձգտող կառավարման համակարգերի նախատեսումն առերևույթ և հայեցակարգային իմաստով խախտում է Հայաստանի անկախության հռչակագիրը:

4. 2015 թվականի դեկտեմբերի 6-ի հանրաքվեով ընդունված նոր խմբագրությամբ ՀՀ Սահմանադրությամբ անցում է կատարվում կիսանախագահական կառավարման ձևից դեպի խորհրդարանական հանրապետություն: Այս առումով Հայոց պետականության պատմական զարգացման ողջ ընթացքը վկայում է (որոշ բացառություններով հանդերձ), որ Հայաստանում պետական կառավարման ձևը (ազգային թագավորությունների և եկեղեցապետականության ժամանակաշրջան-

ներում), որպես կանոն, չի հանգել բացարձակապետության իբրև ինքնակալության ու բացարձակ միապետության եղանակի: Թագավորական իշխանության և միապետի՝ որպես քաղաքական գերիշխանի գաղափարին զուգահեռ հայ սահմանադրական ուսմունքում պահպանվել են խորհրդակցական կառավարման և տարածքային ինքնակառավարման սկզբունքները: Ինքնավարության իրավունքով օժտված անկախ իշխանությունները քաղաքականապես միավորված էին ազգային համապետական շահերի պաշտպանության ըմբռնումով: Հայկական թագավորության պետական իրավունքը միասնական համակարգում միախուսված էր նախարարական և տեղական ինքնակառավարման համակարգերի հետ: Ղեռնա 4-րդ դարից սկսած՝ հայոց ազգային եկեղեցական ժողովները, որին մասնակցում էին ավատական հասարակարգի բոլոր շերտերի ներկայացուցիչները (հոգևոր և աշխարհիկ տերերը, քաղաքային դասը, գյուղացիությունը), ընդունում էին կանոնական որոշումներ, որոնք պարտադիր էին համընդհանուր կատարման, այսինքն՝ օժտված էին նորմատիվ-կարգադիր, սահմանադրական իրավագործությամբ: Այս առումով, կարելի է որոշակի պայմանականությամբ արձանագրել, որ հայոց ազգային եկեղեցական ժողովները հանդիսացել են ժամանակակից խորհրդարանների նախակարապետը՝ որպես կառավարման խորհրդարանական ձևի պատմական յուրահատուկ դրսևորում:

Ըստ էության, Հայոց Առաջին և Երկրորդ (խորհրդային) հանրապետությունները նույնպես կարելի է դիտարկել որպես կառավարման դասական, խորհրդարանական ձևեր:

Այսպիսով, Հայոց պետականության պատմական զարգացումը նույնպես վկայում է, որ հայ հասարակությանը և հայ մարդուն առավել համարժեք է կառավարման խորհրդակցական կամ խորհրդարանական ձևը, քանզի այդ ձևը, լինելով հայ հասարակության և նրա յուրաքանչյուր անդամի բնական ու անօտարելի իրավունքների և ազատությունների կենսագործման գլխավոր պետական երաշխիքը, իր խորն ակունքներով կապված է մեր ժողովրդի ազգային նկարագրի ու հոգևոր կերտվածքի, նրա անցած ուղու և ներկայիս գոյութենական հիմնախնդիրների հետ:

5. Մեզանում իրականացված սահմանադրական բարեփոխումների անհրաժեշտությունը, մեր կարծիքով, ամենից առաջ, պայմանավորված է միջազգային իրավական չափանիշներին համապատասխան՝ մարդու և քաղաքացու իրավունքների արդյունավետ պաշտպանության կառուցակարգերի բարելավմամբ, կառավարման ժողովրդավարական սկզբունքների ամրապնդմամբ և այդ համատեքստում նախագահակենտրոն ուղղահայաց կենտրոնացված կառավարման համակարգից հորիզոնական ապակենտրոնացված համակարգի անցնելու հրամայականում և, ընդհանուր առմամբ, ազգային պետական շինարարության կատարելագործմամբ: Այս առումով, գտնում ենք, որ նոր խմբագրությամբ Սահմանադրությամբ բովանդակային բարեփոխումների հիմնական ուղղությունների (իրավունքի գերակայություն, մարդու իրավունքների պաշտպանության արդյունավետ կառուցակարգ, իշխանության ճյուղերի համակարգում հավասարակշռման ապահովում և կառավարման համակարգի արդյունավետության բարձրացում) հաջող իրականացման գրավականը, հենց կառավարման խորհրդարանական համակարգի (ձևի) սահմանադրաիրավական ամրագրումն է: Ընդ որում, Հայաստանի սահմանադրաիրավական զարգացումը հետագա վայրիվերումներից և հեղաբեկումներից ապահովագրելու և մեր Հանրապետության սահմանադրական

գարագացման պատմա-քաղաքական և իրավական էվոլյուցիոն հաջորդականությանը նպաստելու համար «Սահմանադրության 1-ին գլխում՝ «Սահմանադրական կարգի հիմունքներում», և գլուխ 8-ում կարելի էր ամրագրել որ. «Հայաստանի Հանրապետությունում կառավարման խորհրդարանական ձևը (համակարգը) փոփոխման ենթակա չէ»:

6. Հայաստանի Երրորդ Հանրապետության ավելի քան 25-ամյա սահմանադրական զարգացման փորձը հուշում է, որ պետական կառավարման ֆորմալ-սահմանադրական համակարգերի և հասարական իրականության փոխազդեցության մեջ մեզանում ավելի մեծ կարևորություն է տրվել սահմանադրական ձևական լուծումների կատարելագործմանը, մինչդեռ հասարական հարաբերությունների սահմանադրականացման հարցը բավարար ուշադրության չի արժանացել: Այնինչ, Սահմանադրությամբ նախատեսված՝ իշխանավարման կառուցակարգերի բարելավմանը զուգահեռ խիստ կարևոր է Հայաստանի քաղաքական ընտրանու և ամբողջ հասարակության իրավագիտակցության և երկրի սահմանադրական մշակույթի ընդհանուր մակարդակի բարձրացումը, հասարակական հարաբերությունների սահմանադրական արժևորման և սահմանադրականացման մակարդակի բարձրացումը: Նման պայմաններում հնարավոր կլինի ապահովել պետաիշխանալան համակարգի ընտրված մոդելի ամբողջական ինքնադրսևորումը և, համապատասխանաբար, ավելի ճշգրիտ ախտորոշել պետական կառավարման ձևի՝ Սահմանադրությամբ ամրագրված կառուցակարգերի թերությունները և նախանշել հասարակության կենսագոյի սահմանադրական կանոնակարգման կատարելագործման ուղիներն ու եղանակները:

7. Նոր խմբագրությամբ «Սահմանադրությունում առաջարկվող խորհրդարանական համակարգում իշխանության գերանձնավորումը խիստ կնվազի, քանի որ կայուն խորհրդարանական մեծամասնության սկզբունքի ներդրմամբ ժողովուրդը մասնակցելու է ոչ միայն օրենսդիր, այլև անուղակիորեն նաև գործադիր իշխանության ձևավորմանը: Ուստի նման պայմաններում վարչապետ կարող է դառնալ միայն ամենաուժեղ և հանրորեն ընդունելի քաղաքական ուժի (ուժերի) ներկայացուցիչը: Նոր խմբագրությամբ սահմանված կառավարության քաղաքական պատասխանատվությունը միայն խորհրդարանի առջև կնպաստի կոլեգիալ կառավարմանը: Խորհրդարանական կառավարման համակարգը կնպաստի խորհրդարանի քաղաքական դերի ուժեղացմանը որպես օրենսդիր և վերահսկողություն ունեցող մարմին, որտեղ էականորեն ուժեղացվում է ընդդիմության դերը: Խորհրդարանական կառավարման համակարգում ընդդիմության նոր դերին և նշանակությանը համապատասխան՝ նրան վերապահվել է սահմանադրական ինստիտուտի կարգավիճակ, և էապես ավելացվել են խորհրդարանական փոքրամասնության լիազորություններն ու հնարավորությունները՝ մասնակցելու քաղաքական իշխանության իրականացմանը և ներազդելու ընդունվող որոշումներին կրա:

8. Չնայած, ընդհանուր առմամբ, հավասարակշռված և զրազետ սահմանադրաիրավական լուծումներին՝ Հայաստանի Հանրապետության խորհրդարանական կառավարման սահմանադրական համակարգն ունի կառուցակարգային ջիսկեր պարունակող որոշակի դրսևորումներ՝ կայուն խորհրդարանական մեծամասնության սկզբունքի գործնական գործառման օրենսդրական կարգի ոչ պատշաճ համապատասխանությունը ներկայացուցչական ժողովրդավարության և համամասնական ընտրական համակարգի ելակետային դրույթներին, ընդդիմության

սահմանադրական կարգավիճակի իրացման սահմանադրաիրավական և օրենսդրական երաշխիքների խնդիրները, վարչապետի նշանակման և ընտրության նախատեսված կարգի ռիսկայնությունը գործադիր իշխանության իրականացման հարցում ժողովրդի մասնակցության ձևի և չափի, ինչպես նաև վարչապետի և Կառավարության հանրային-քաղաքական հաշվետվողականության տեսանկյունից, Նախագահի՝ իր կարգավիճակից բխող խնդիրների իրագործման տեսանկյունից սահմանափակ լիազորությունները, ռազմա-պաշտպանական ոլորտի կառավարման սահմանադրական լուծումների խնդրահարույց բնույթը:

Թեկնածուական ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ գիտական հրապարակումներում

1. Հայաստանի կուսակցական համակարգի կայացման հիմնախնդիրը նոր սահմանադրական իրականության պայմաններում, Օրինականություն (ՀՀ դատախազության գիտագործնական և ուսումնամեթոդական հանդես), Եր., N 99, 2017, էջեր 39-46.

2. Հայաստանի Հանրապետության կառավարման համակարգը (ծևը) և դրա կառուցակարգային դրսևորումները նախքան 1995թ. Սահմանադրության ընդունումը, Օրինականություն (ՀՀ դատախազության գիտագործնական և ուսումնամեթոդական հանդես), Եր., N 94, 2016, էջեր 58-63.

3. Ընդդիմության խորհրդարանական կարգավիճակի հիմնախնդիրը սահմանադրական բարեփոխումների համատեքստում, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների 2016թ. նստաշրջանի նյութերի ժողովածու, ԵՊՀ հրատ., Երևան 2017, էջեր 91-107.

4. ՀՀ Նախագահը՝ որպես Սահմանադրության երաշխավոր սահմանադրական բարեփոխումների համատեքստում, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների 2015թ. նստաշրջանի նյութերի ժողովածու, ԵՊՀ հրատ., Երևան 2016, էջեր 115-132.

5. Հայաստանի Հանրապետության խորհրդարանական կառավարման համակարգի կառուցակարգային ռիսկերը և դրանց վերացման ուղիները, Ղատական իշխանություն (գիտամեթոդական ամսագիր), 10-11/208-209, 2016, հոկտեմբեր-նոյեմբեր, էջեր 18-26.

6. Կառավարման խորհրդարանական ձևի առանձնահատկությունները սահմանադրական բարեփոխումների համատեքստում, Արդարադատություն, «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական ինստիտուտ» ՊՈԱԿ, 2016 մարտ 1(32), էջեր 34-38.

7. Պետական իշխանության բարձրագույն մարմինների փոխհարաբերակցությունը և կոնֆլիկտները պետական կառավարման տարբեր ձևերի պայմաններում, Արդարադատություն, «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական ինստիտուտ» ՊՈԱԿ, 2015 դեկտեմբեր 4(31), էջեր 21-33:

ПРОБЛЕМЫ РАЗВИТИЯ ФОРМЫ ГОСУДАРСТВЕННОГО ПРАВЛЕНИЯ В
ТРЕТЬЕЙ АРМЯНСКОЙ РЕСПУБЛИКЕ

РЕЗЮМЕ

Диссертационное исследование посвящено проблематике развития системы правления в Третьей армянской республике. Актуальность данной темы обусловлена с одной стороны крупномасштабными конституционными реформами в Армении и, в частности, сменой полупрезидентской системы на парламентскую, а с другой стороны - сравнительно малым количеством научных работ на эту тему. В результате, теоретические и практические основы и свойства формы правления и ее влияние на политическую жизнь в государстве, а также воздействие фактических политических и юридических институтов на выбор и функционирование формы правления не являются предметом широких научных и практических дискуссий, не смотря на их колоссальное значение для нормального функционирования государства и реализации поставленных властью политических задач.

Одна из главных особенностей эволюции системы правления в Республики Армения - апробация практически всех основных вариаций республиканской формы правления: президентской, суперпрезидентской, полупрезидентской и наконец парламентской. Быстрая сменяемость моделей государственного правления говорит о несостоявшейся политической системе, которая еще не обрела ту степень устойчивости и преемственности, которые пресущи, например, западно-европейским демократиям, Одновременно поиски наиболее приемлемой архитектуры государственной власти полезны для дальнейшей реформы и оздоровления государственной машины Республики Армения.

В данном контексте следует отметить, что исследование эволюции системы правления в Армении в данной диссертационной работе основана не только на формальных правовых предписаниях, но так же на иных важных факторах, влияющих на форму и содержание отношений между властными институтами. Такими факторами, в частности, являются уровень правосознания народа, политическая и конституционная культура, экономическое состояние, в том числе качество распределения народного богатства между разными слоями и членами общества, наличия внешней угрозы безопасности государства и т.д.,. Основываясь на данной формуле произведен анализ форм правления в Армении, в том числе зарождения и развития президентской системы, которая включала в себя как исконно президентскую форму правления в 1991-1995гг., так и суперпрезидентскую систему 1995-2005гг. и полупрезидентскую форму правления 2005-2015гг. В результате автором было сделано заключение, что сосредоточие властных полномочий в руках президента страны имело объективные причины, такие как зачаточное состояние партийной системы, наличие военного конфликта с Азербайджаном, который требовал милитаризацию общества и экономики, а так же принятия оперативных решений, необходимость проведения системных экономических и правовых реформ и т.д. Однако начиная уже с 1995г., когда в Армении была принята Конституция, и была утверждена суперпрезидентская система правления политическая система Армении

развивалась в сторону развития плюралистических и коллегиальных политических институтов, таких как партии, парламент, общественные организации и т.д. что сказывалось на векторе дальнейших конституционных реформ вплоть до перехода к парламентской системе правления, которые были ориентированы на постепенное ограничивание правового статуса и полномочий президента, как единачлиного фактически высшего государственного института в пользу коллегиальных государственных институтов.

Помимо анализа взаимного влияния правовых форм правления и политических институтов автором данной научной работы осуществлен правовой анализ сугубо конституционных институций каждой из форм правления в Армении в течение более чем двадцатилетнего периода конституционной эволюции.

Исходя из важности конституционных реформ 2015г. для архитектуры системы власти в Армении, автором был сделан особый акцент на исследовании новой парламентской формы правления, закрепленной в Конституции с точки зрения как формальных конституционных институтов, так и политических, правовых, исторических и иных предпосылок для внедрения парламентского правления в Республику Армения. В частности автором сделан вывод, что конституционные основы парламентаризма и парламентской системы заложены в Декларацию Независимости Армении 23-ого августа 1990 года, следовательно дальнейшие конституционные предписания противоречат Декларации независимости как основополагающему документу для всей конституционной системы Армении. Кроме того, исторически Армения была приспособлена к коллегиальной системе правления как в средние века в время национальных собраний и церковных соборов так и в дальнейшем. В частности, армянская политическая мысль в лице Шаамира Шаамиряна и Мовсеса Баграмяна обосновывала важность парламентской системы для будущей независимой Армении. Парламентарная-коллегиальная система правления была одним из основных пунктов первых армянских партий, а так же институциональной базой для Первой и Второй Армянских Республик. Автором доказывается, что вышеупомянутые факторы в купе с необходимостью дальнейшего развития демократических коллегиальных институтов и установления нового статуса кво внутри политической элиты привели к пересмотру Конституции и установлению парламентарной республики. В данном контексте автор опирается на теорию элит, как основной теоретический базис для анализа новой системы правления.

Автор проделал обширный юридический анализ новой системы правления с точки зрения конституционных норм и гарантий политико-правовых отношений между высшими конституционно-властными институтами государства. Особое внимание было уделено тем, по мнению автора, коллизиям, пробелам и системным рискам, которые содержит модель властной системы, которая получила конституционное и, в дальнейшем, так же законодательное закрепление.

На основе проведенного анализа автором были сделаны соответствующие заключения.

**PROBLEMS OF DEVELOPMENT OF THE FORM OF GOVERNMENT IN THE
THIRD ARMENIAN REPUBLIC**

ABSTRACT

This research thesis is dedicated to the issue of development of the system of government in the Third Armenian Republic. Urgency of the selected topic is conditioned by large-scale constitutional reforms occurred in Armenia particularly including shift from semi-presidential system of government to parliamentary democracy and by comparatively small number of scientific works on this issue. As a result theoretical and practical bases and features of a governmental form, their influence on political life of the country as well as the impact of de facto political and legal institutions on the choice and functioning of the form of government are not subject of large scientific and practical discussions despite their huge importance for normal functioning of state and realization of its political tasks.

One of the main peculiarities of evolution of the system of government is practical application of all main types of democratic governance: presidential, superpresidential, semipresidential and parliamentary. Frequent substitution of governmental models is a vivid evidence of malfunctioning political system which does not yet have satisfactory level of sustainability and continuity which is on the contrary typical of Western democracies. At the same time looking for most acceptable architecture of state power are efficient for further reform and health of state machinery of the Republic of Armenia.

Within this context it is worth mentioning that the research of evolution of state government in Armenia in the dissertation is based not only on formal legal stipulations but also on important factors which influence the form and content of relations between power institutions. Such factors are: level of legal conscience of the people, political and constitutional culture, economic situation, including quality of distribution of social wealth among different social groups and members of the society, existence of external danger to state security etc.

Based on this formula analysis of forms of government in Armenia is made, including emergence of so-called president-oriented system which comprises presidential democracy of 1991-1995, superpresidential system of 1995-2005 and semi-presidential form of government of 2005-2015.

Based on the analysis made the author has concluded that concentration of influential powers in the hand of a president had objective reasons such as newly emerged and undeveloped party system, military conflict with Azerbaijan which led to militarization of the society and economy and required adoption of operative decisions, necessity of systemic economic and legal reforms etc. However starting from 1995 when new Constitution was adopted in Armenia and superpresidential system was established Armenia developed towards advancement of pluralistic and collegial institutions such as parties, parliament, NGOs etc. This fact contributed to the vector of further constitutional reforms the final accord of which was establishment of parliamentary form of government. The gist of constitutional reforms made in 2005 and 2015 was gradual restriction of President's powers as a

factually sole supreme state institution in favour of collegial state institutions.

Besides analysis of mutual influence of legal forms of government and political institutions the author of this scientific work has performed legal analysis of pure constitutional institutions of each form of government in Armenia during more than twenty- five year evolution.

Taking account of importance of constitutional reforms of 2015 for architecture of system of power in Armenia the author has specifically accentuated the research of new parliamentary form of government prescribed in the Constitution in terms of formal constitutional institutions as well as political, legal, historical and other prerequisites of this constitutional reform. In particular the author has concluded that constitutional bases of parliamentarism and parliamentary system are embedded in the Declaration of Independence of Armenia of August 23 1990. Consequently further constitutional stipulations contradict the Declaration of Independence as an essential document for the whole constitutional system of Armenia. Besides historically Armenia always was adapted to collegial system of government including medieval time national assemblies and church cathedrals and further developments. Particularly Armenian political thought in the person of Shahamir Shahamiryan and Movses Baghramyan justified importance of parliamentary system of government for future independent Armenia. The author substantiates that aforementioned factors together with necessity of further development of democratic collegial institutions and establishment of new status que inside political elite has entailed revision of Constitution and establishment of the parliamentary republic. In this context the authors refers to the theory of elites as a main theoretical tool for consideration of transformation of existing political system.

The author has made profound legal analysis of new system of government in terms of constitutional norms and guarantees of political-legal relations between supreme constitutional institutions of state. Specific attention has been paid to collisions, gaps and systemic risks that according to the author newly established constitutional system of government contains.

Based on analysis performed the author has set forth relevant conclusions.